

Ձոյգ կոթողներն այս գովէ գով,
Վկան խօսուն ձեր խիղճերուն,
Ու սերին մեծ՝ հանդէպ Հայուն,
Պիտի տանին փառքն աննկուն
Ձեր սիրտերուն՝ սերունդներուն,
Թեւին վրայ տարիներուն ...:
Գեորգ Գազանճեան

Այս տարի կը լրանայ ծննդեան 160րդ տարեդարձը ու մահուան 75րդ տարելիցը Աղա Կարապետ Մելգոնեանին: Բայց քանի որ Աղա Գրիգոր Մելգոնեանի մահուան 80րդ տարելիցը կը լրանայ յառաջիկայ տարի եւ որովհետեւ բարերար եղբայրները, ազգին գատարած իրենց հսկայական նուիրատուութեան՝ Մելգոնեան Կրթական Հաստատութեան շնորհիւ միշտ յիշուած են միասին, այստեղ ալ միասին պիտի յիշենք զիրենք:

Գրիգոր եւ Կարապետ Մելգոնեան եղբայրները ծնած են Կեսարիոյ Լուսաւորիչ թաղին մէջ: Կիւմիւշեան նախակրթարանի քանի մը տարիներու բարիքները հազիւ վայելած՝ կը ստիպուին երթալ Պոլիս, ապա՝ Ռումանիա եւ ի վերջոյ՝ Ադեքսանդրիա, ուր կը բանեցնեն ծխախոտի կրպակ մը: Երբ կը ծագի Արապի Փաշայի ապստամբութիւնը, ամբոխը աւարի կ'ենթարկէ ոչ բնիկներու եւ երոպացիներու խանութները: Խաղաղութիւնը վերահաստատուելէն վերջ, Մելգոնեան եղբայրները, ուրիշներու կարգին, 9.000 ոսկի վնասուց հատուցում կը ստանան կառավարական Քննիչ Յանձնախումբէն, զոր կը գլխաւորէր Թագուր Փաշա Յակոբեան (Պէրութի Դարուհի Յակոբեան Աղջկանց Երկրորդական Վարժարանի նուիրատուն): Մելգոնեանները խոռովութեանց միջոցին կարողացած էին իրենց ապրանքին կարելոր մասը փրկել բարեկամներու օգնութեամբ: Չայն կը ծախեն 13.000 ոսկիի ու այսպէս կ'ունենան 22.000 ոսկի, որ հարստութիւն մըն էր այդ օրերուն:

Այս գումարով անոնք Չակագիկ քաղաքին մէջ կը հաստատեն ծխախոտի սեփական գործարան մը, իսկ շուտով մասնաճիւղեր կ'ունենան Աստուանի եւ այլ քաղաքներու մէջ: 1900-ին Մելգոնեան գործարանը կը փոխադրուի Գահիրէ, իրենց նորակառոյց սեփական հիմնարկը: Չարաչար աշխատանքով, նախա- ձեռնող ոգիով, բախտին ալ օգնութեամբ՝ անոնք կը հասնին մեծ յաջողութեան: 1914-ին Մելգոնեան գործարանը յայտնի անուն էր տնտեսական հրապարակի վրայ, ունէր 80 մասնաճիւղ Եգիպտոսի եւ Սուտանի մէջ ու կը սպառէր օրական 19 միլիոն գլանիկ: Անոնք սիկարէթ կը հայթայթէին Եգիպտոսի անգլիական բանակին, Ճաբոնի կառավարութեան եւ Սիամի արգունիքին: Գրիգոր կը զբաղէր գործարանի արտադրութեան հսկողութեամբ,

իսկ Կարապետ՝ առեւտուրով եւ արտաքին յարաբերութեամբ: Անոնք տարբեր խառնուածքով

29

անձեր էին. Մեծը դանդաղ բայց ապահով գործի հը հաւատար, իսկ կրտսերը արագ էր եւ յանդուգն: Առաջին Համաշխարհային Պատերազմի նախօրեակին՝ Կարապետ, առանց եղբօր հետ խորհրդակցելու, վճռական որոշումով 2.000 թոն ծխախոտ կ'ապսպրէ՝ Ծայրագոյն Արեւելքի իրենց գործակատարին առաջարկին դրական պատասխան տալով: Երբ 4.000 կապոցները կը հասնին Եգիպտոս, պատերազմը կը պայթի: Ծխախոտին գինը աներեւակայլի մագլցում կ'արձանագրէ:

Գրիգոր եւ Կարապետ հայերէն խօսիլ եւ գրել չէին գիտեր: Այդ է պատճառը իրենց մականունին «Գ»ով գրուելուն: Անուս բայց ուշիմ հայորդիները գիտէին, սակայն, դպրոցին արժէքը: Անոնք արդէն նիւթապէս կ'օժանդակէին իրենց ծննդավայրի Կիւմիւշեան Վարժարանին եւ Խարբերդի Թլկատինցիի դրպրոցին: Ամենայն հաւանականութեամբ, Ատանայի Հայոց նախկին Առաջնորդ՝ Եպս. Մուշեղ Սերոբեան կ'ըլլայ իրենց հարստութիւնը հայեցի կրթութեան տրամադրելու գաղափարը թելադրողը, 1909-ին, եւ հետապնդողը՝ 1912-էն սկսեալ:

Գրիգոր, որու նախնական ծրագիրն էր աղջկանց վարժարան մը հիմնել, կը մահանայ 1920-ին: Իր մահով Կարապետ կ'ըլլայ ժառանգորդը անոր հարստութեան: Ան ոչ միայն կը յարգէ եղբօր կտակը, այլ անոր վրայ կ'աւելցնէ իր ամբողջ հարստութիւնը, շուրջ 600.000 անգլիական հնչուն ոսկի, յատկացւելու համար աղջկանց եւ մանչերու զոյգ կրթարաններու կառուցման եւ պահպանութեան, ինչպէս նաեւ այլ մշակութային ձեռնարկներու՝ հայրենիքի եւ սփիւռքի մէջ: Իրենց երրորդ եղբօր, Յակոբի որդին՝ Արթաքի դատ կը բանայ, բաժինը պահանջելով: Կարապետ ուներ նախ՝ օսմանեան, ապա՝ ռումանական հպատակութիւն: Հարստութիւնը փրկելու համար կ'ըլլայ յունական, հայկական (թերեւս Ազատ Հայաստանի արտասահմանեան առաջին քաղաքացին) եւ, ի վերջոյ՝ եգիպտական հպատակ:

Յուլիս 25, 1921-ի նոտարական գործողութեամբ մը Մելգոնեան նուիրատուութիւնը կը յանձնուի Պոլսոյ Պատրիարքութեան, որու աթոռակալն էր Զաւէն Արք. Տէր Եղիայեան, հետեւեալ նպատակով՝ «Թրքահայաստանի եւ Կիլիկիոյ մէջ երեք դպրոցներ բանալ Հայաստանեայց Եկեղեցիի աղջիկ եւ մանչ զաւակներուն համար»: Քաղաքական դէպքերը, սակայն, կը վատթարանան Հայաստանի, Կիլիկիոյ եւ Պոլսոյ մէջ: Պատրիարքը հազիւ կեանքը փրկելով կ'ապաստանի արտասահման: Կարապետ Մելգոնեան եւ Մուշեղ Եպս. Սերոբեան կը մտածեն կրթարանը հաստատել Իտալիոյ, Մուրիոյ, Լիբանանի, նոյնիսկ Յունաստանի մէջ: Ի վերջոյ կը հանգին Կիպրոսի վրայ, ապահովութեան տեսակէտէ (կղզին կը գտնուէր անգլիական իշխանութեան տակ), ինչպէս

նաեւ Կիպրոս-Կիլիկիա սերտ յարաբերութիւններուն եւ կղզիին հայահոծ շրջաններու մերձակայքը գտնուելուն պատճառաւ:

30

Հողը, 18.7 հեկտար, կը գնուի 1923-ին, Նիկոսիայէն մօտ 5 մղոն հեռաւորութեան վրայ: Ըստ աւանդութեան՝ Աղա Կարապետ եւ իրեն ուղեկցողները Նիկոսիայէն կ'ուղղուին դէպի հարաւ այսօրուան Լիմասոլի Պողոտային երկայնքով: Որոշ տեղ մը հասնելէ վերջ, 100-200 մէթրը անգամ մը ան կը կենար, կը դառնար, ու կը շարունակէր: Երբ կը հասնի այսօրուան վայրը, գաւազանը կը զարնէ գետնին, ըսելով թէ կը փափաքէր որ այնտեղ շինուէր դպրոցը: Կը զարմանան բոլորը, քանի որ ամայի եւ խոպան շրջան մըն էր այդ (որը մշակելի դարձնելու համար բաւական մեծ գումար կը ծախսուի աւելի վերջ), ծանօթ որպէս «օձերու բլուր»: Կարապետ կը պատճառաբանէ իր որոշումը, ըսելով թէ ոչ մէկ մզկիթի աշտարակ կ'երեւէր այդ կետէն, տեսարան մը որ վստահաբար պիտի խոսովէր Յեղասպանութեան որբերը, որ դեռ նոր փրկուած էին թուրքին ձեռքէն:

Շինութիւնները – գոյգ եռայարկ դպրոցական շէնքերը, բարերարին վիլլան (որ իր մահէն յետոյ դարձաւ տնօրէնին բնակարանը), հիւանդանոց, ուսուցիչներու բնակարաններ, ջրամբար, խոհանոց, լուացարան, բաղնիք, մառան, արհեստանոց, մեքենատուն, գոմ – կը սկսին 1924-ի Փետրուարին ու կ'աւարտին 1926-ի Դեկտեմբերին, ըստ եգիպտահայ անուանի ճարտարապետ Կարօ Պալեանի նախագիծին: Մանչերու բաժնի դասերը կը սկսին Փետրուարին, իսկ աղջկանցը՝ Մայիսին, վերատեսչութեամբ Զաւէն Պատրիարքին եւ տնօրէնութեամբ Լեւոն Թաշճեանի: Երկուտեղ աշակերտութիւնը, 6-13 տարեկան, կու գար Սուրիոյ, Պաղեստինի եւ Լիբանանի որբանոցներէն, փոքր թիւ մըն ալ Յունաստանէն, Եգիպտոսէն, Կիպրոսէն:

Եգիպտոսի մէջ կազմուած Մելգոնեան Հաստատութեան խնամակալ մարմինի անդամները կ'ուզէին Մելգոնեան նուիրատուութիւնը օրինական հիմերու վրայ դնել, անոր ապագան վտանգէ զերծ պահելու համար: Անոնք կը դիմեն Պօղոս Նուպարին, ատենի ամենէն հեղինակաւոր անձին, որ գործակցելով եկեղեցական եւ հանրային ձեռնհաս դէմքերու եւ օրէնսգէտներու հետ, նոր համաձայնագիրով մը նուիրատուութիւնը 1925-ի Դեկտեմբերին կը փոխանցեն ՀԲԸՄիութեան: Այս օրինական գործողութեամբ Միութիւնը յանձն կ'առնէր ա. Հոգալ Հաստատութեան տարեկան ծախսը, առաւելագոյնը 500 երկուտեղ աշակերտներու:

բ. Տարեկան 1000 եգիպտ. ոսկի վճարել Երուսաղէմի Պատրիարքութեան Ժառանգաւորաց դպրոցին:

գ. Տարեկան 1000 ոսկի Պոլսոյ Պատրիարքարանին եւ 500 ոսկի Ս.Փրկիչ Ազգ. Հիւանդանոցին:

- դ. Տարեկան 3000 ոսկի Երեւանի Համալսարանին՝ հայագիտական ամպիոնին եւ երկերու հրատարակութեան:
- ե. Աղեքսանդրիոյ մէջ կառուցուելիք Մելգոնեան մանկապարտէզին յատկացնել 6500 ոսկի:

31

զ. Օժանդակել Կիպրոսի հայոց Մակարայ Վանքի ճամբուն շինութեան, 1000 ոսկի տրամադրելով:

է. Բարերարին իբր կենսաթոշակ տրամադրել 5000 ոսկի:

Այնուհետեւ Պօղոս Նուպար կը լծուի Մելգոնեան գործարանի վաճառքին եւ հաշուեյարդարին: Գործարանը կը ծախուի Իսթըրն Օխսիտոսի Ընկերութեան 564.696 անգլիական ոսկիի: Անկէ զեղչելով գործարանին պարտքերը, հատուցումներն ու ծախսերը, մնացեալ գումարը՝ 506.054 անգլ. ոսկի իբր «թրասաթ» կը դրուի Լոնտոնի եւ Նիւ Եորքի ծանօթ դրամատուներու մօտ: Իրաւախոհութեամբ կը լուծէ նաեւ Արթազի Մելգոնեանի ժառանգական հարցը եւ Մուշեղ Մերոբեանի վնասուց հատուցումի պահանջը, իսկ Զաւէն Արքեպս. իր ծառայութեանց համար կ'արժանանայ ՀԲԸՄիութեան բարերար անդամի տիտղոսին եւ պատուագինի մը:

Բարերարը շուրջ 10 տարի կը վայելէ եղբօր եւ իր բարերարութեան արդիւնքը: «Թուրքը մեզ մաղէ անցուց, ջարդեց նախ մեր մեծերը, մեր վարիչները, ու ապա՝ մեր ամբողջ ազգը» ըսած է ան առաջին տնօրէններէն մէկուն եւ աւելցուցած «իմ դպրոցս պէտք է մեր վրէժը լուծէ. Այդ որք ձագուկները պէտք է իրենց հօրենական տունը նորէն շինեն, եւ անոնցմէ պէտք է պատրաստենք մեր նոր մեծերը»: Իսկ առաջին շրջանաւարտներէն մէկը կը յիշէր «Ծերունի մը, 80 տարիներու բերը շալկած, այնքան վտիտ մարմնով, սակայն մեծ սրտով, կարճահասակ, սակայն բարձր հոգիով, թրքախօս, բայց մաքրամաքուր հայրենասէր մը ... մեր անմոռանալի Մելգոնեան բարերար հայրիկը, որ երբեք ձայնով կ'ըսէր – աղջիկներս, ես ճամբորդ եմ, իսկ դուք վաղը պիտի ցրուիք աշխարհով մէկ. եթէ արժանի չըլլաք Մելգոնեանի անուան, չեմ անիծեր ձեզ, բայց չեմ ալ օրհներ»:

Կարապետ Մելգոնեան կը վախճանի 1934-ի Յուլիսին, 85 տարեկանին, Աղեքսանդրիոյ մէջ, ուրկէ զմրսուած մարմինը կը փոխադրուի Նիկոսիա ու մեծ շուքով կ'ամփոփուի գոյգ շէնքերուն միջեւ գտնուող դամբարանին մէջ: 9 ամիս ետք նոյն հանգստարանին մէջ կը զետեղուին նաեւ Գրիգոր Մելգոնեանի աճիւնները: 1955-ին կը կառուցուի մարմարեայ յուշարձանը իրենց կիսանդրիներով, որ կ'ըլլայ ուխտավայր իւրաքանչիւր Մելգոնեանցիի համար, ուր ամէն տարի Յունուար 14-ին՝ Ս. Յովհաննու Կարապետի տօնին աշակերտութիւն եւ ուսուցչական կազմ իրենց յարգանքի տուրքը կը մատուցանէին Մելգոնեան անգուգական բարերարներու անմոռաց յիշատակին:

Հակառակ որ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը փակուած է 2005-էն սադիւն, նոյն անդրութիւնը կը շարունակուի: Հաստատութեան աշխարհա-

սփիւռ շրջանաարտները եւս, յաւէտ երախտապարտ՝ կը շարունակեն այդ
աւանդութիւնը, ուր որ ալ գտնուին անոնք: